Կ-1352²-05.05.2026-ՏՀ-011

ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասում, 234.11 հոդվածի 2-րդ մասում և 234 .12-րդ հոդվածի 2-րդ մասում «տեղեկագրում» բառը փոխարինել «գնումների միասնական հարթակում» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 27.2
(գլուխը լրաց. 21.01.22 ՀՕ-7-Ն)

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 234.5. Հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գնումների հետ կապված վեճերը և դրանց լուծման ժամկետը

1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Հոդված 234.6. Հայցադիմումը վարույթ ընդունելը և դատարանի գործողությունները հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

4. Դատարանը միևնույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն գլխով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:

5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված գնումների միասնական հարթակում ~~տեղեկագրում~~՝ նշելով կասեցման օրը:

Հոդված 234.7. Պատասխանողի գործողությունները հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո

(վերնագիրը խմբ. 07.02.24 ՀՕ-82-Ն)

1. Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

(234.7-րդ հոդվածը խմբ. 07.02.24 ՀՕ-82-Ն)

(07.02.24 ՀՕ-82-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Հոդված 234.8. Դատական ծանուցման կարգի առանձնահատկությունները

1. Գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Հոդված 234.9. Գործի քննության կարգը

1. Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

2. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

3. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

(234.9-րդ հոդվածը խմբ. 07.02.24 ՀՕ-82-Ն)

(07.02.24 ՀՕ-82-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Հոդված 234.10. Գնումների հետ կապված վեճով ապացուցման պարտականությունը

բաշխելու կանոնները

1. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

2. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Հոդված 234.11. Գնման գործընթացի կասեցումը

1. Բացառությամբ «Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքերի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

2. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված գնումների միասնական հարթակում~~տեղեկագրում~~:

(234.11-րդ հոդվածը փոփ. 04.03.26 ՀՕ-56-Ն)

Հոդված 234.12. Գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների օրինական ուժի մեջ մտնելը

1. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտը դրա հրապարակման օրն ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ

այլ եզրափակիչ դատական ակտն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված գնումների միասնական հարթակում~~տեղեկագրում~~:

3. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտերի կատարումը սույն օրենսգրքի 370-րդ հոդվածի 5-րդ մասի և 394-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով չի կարող կասեցվել:

(234.12-րդ հոդվածը լրաց. 04.03.26 ՀՕ-56-Ն)

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-1352 -05.05.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում կատարել փոփոխություն:	««Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 6-ի ՀՕ-218-Ն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում արդեն իսկ լրացվել են 25-րդ և 26-րդ կետեր, ինչի արդյունքում համապատասխանեցվում է համարակալումը: Նշվածով պայմանավորված հանվում է նաև Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2	*ՀՀ*	«Գնումների մասին» օրենքում լրացում	Նախագծի 4-րդ հոդվածում՝ Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ	Ընդունվել է կատարվել	Ընդունվել է:

	կառավարություն	կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածում կատարել փոփոխություն և լրացում:	կետում «ներկայացվող պահանջները» բառերը փոխարինել «կնքման կարգը և դրա առանձնահատկությունները» բառերով: Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով նույն հոդվածը լրացվել է 12.1 և 12.2 կետերով, որոնք նույնությամբ կրկնում են ««Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 6-ի ՀՕ-218-Ն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները:	է համապատասխան փոփոխություն:	
3	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածը լրացվել է նոր կետով:	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի փոխգործակցությունն ապահովելու նպատակով առաջարկվում է «տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում» նախադասությունը փոխարինել «տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ստանալուց	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հետո՝ հինգ օրվա ընթացքում» նախադասությամբ:		
4	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածը խմբագրվել է:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է «Բացառությամբ բաժին 4-ի վերնագրի» բառից հետո լրացնել «և 33-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը, իսկ «բառերով» բառից հետո լրացնել «համապատասխան հոլովաձևերով» բառերով:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին կետը խմբագրվել է:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է «1-ին կետի «ա»-«ը» ենթակետերով» բառից հանել «1-ին» բառը:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետում կատարվել է լրացում:	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետը լրացվել է նոր բովանդակությամբ հետևյալ նախադասությամբ՝ «Սույն ենթակետի պահանջները չեն կիրառվում, եթե պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է սույն օրենքի 36-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքով:» Նշված կարգավորումը նույնությամբ կրկնում է ««Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 6-ի ՀՕ-218-Ն	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը: Լրացումը իրականացվել է պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով:		
7	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետում կատարվել է լրացում:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է Նախագծի 11-րդ հոդվածը լրացնել նոր բովանդակությամբ՝ «4-րդ մասի 2-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.»: Կատարվել է կետերի համապատասխան համարակալում	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածում կատարվել է լրացում:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է Նախագծի 15-րդ հոդվածը լրացնել նոր բովանդակությամբ՝ «2-րդ մասի 12-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.» և կատարել կետերի համապատասխան համարակալում	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 16--րդ հոդվածի 2-րդ կետ խմբագրվել	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն ապահովելու համար առաջարկվում է «մլն.» բառը փոխարինվել է միլիոն բառով:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		է:			
10	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 18-րդ և 25-րդ հոդվածները խմբագրվել են:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է «ձև» բառը փոխարինվել է «ընթացակարգ» բառով:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11		«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 18-րդ հոդվածը խմբագրվել է:	«Մեկ անձից գնման ընթացակարգի կիրառմամբ կնքվող պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը չի կարող ավել լինել 365, իսկ նահանջ տարվա դեպքում՝ 366 օրացուցային օրից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «է» և «ը» ենթակետերի և 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերի, որոնց դեպքում առավելագույն ժամկետը կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:» նախադասությունը հանվել է և լրացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է նախատեսել սահմանափակումներ պատվիրատուի կողմից մեկ անձից	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			գնման ընթացակարգով կնքվող պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների վերաբերյալ:» նախադասությամբ:		
12	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդվածում ավելացվել են նոր կետեր և հոդվածը խմբագրվել է:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է «ընթացակարգ» բառը փոխարինվել է «փուլ» բառով համապատասխան հոլովաձևերով: Հանվել է «2-րդ մասում «տեղեկագրում» բառը փոխարինել «գնումների միասնական հարթակում» բառերով» նախադասությունը՝ նկատի ունենալով Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը: Համապատասխանեցվել է կետերի համարակալումը:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
13	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածը խմբագրվել է:	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի և 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները ապահովելու նպատակով առաջարկվում է «ԲԱԺԻՆ» բառը գրվել է փոքրատառերով:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
14	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները ապահովելու նպատակով	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		29-րդ հոդվածը հանվել է:	առաջարկվում է նախագծից հանվել է 29-րդ հոդվածը, իսկ հաջորդող հոդվածները համարակալվել են համապատասխան հերթականությամբ:		
15	*ՀՀ կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 32-րդ հոդվածը խմբագրվել է: Նախագծում ներկայացված է որպես 31-րդ հոդված:	Պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով առաջարկվում է «4-րդ բաժինը և 5-րդ գլուխը» բառերը փոխարինվել «4-րդ գլուխը և 5-րդ բաժինը» բառերով:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
16	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում հակասությունները բացառելու նպատակով ներկայացվել է նաև վերոնշյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որով առաջարկվում է «տեղեկագրում» բառը փոխարինել «գնումների միասնական հարթակում»	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			բառերով: Մասնավորապես նախատեսվել են հետևյալ կարգավորումները՝ **Հոդված 1.** 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասում, 234.11 հոդվածի 2-րդ մասում և 234.12-րդ հոդվածի 2-րդ մասում «տեղեկագրում» բառը փոխարինել «գնումների միասնական հարթակում» բառերով: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:		